

1.2.3. Ձկնորսություն, ձկնաբուծություն

Հանրապետությունում 2005թ. հունվար-ապրիլին, համաձայն ձկնորսությամբ և ձկնաբուծությամբ զբաղվող առևտրային կազմակերպությունների ներկայացրած պետական վիճակագրական հաշվետվությունների տվյալների, իրականացվել է 317.8 մլն. դրամի ձկան որս, որը զիջել է 2004թ. նույն ժամանակաշրջանի մակարդակը 35.4%-ով (համադրելի գներով):

Ձկնորսության և ձկնաբուծության արդյունքները հանրապետությունում¹

	Տոննա		Հազար դրամ		2005թ. հունվար-ապրիլը 2004թ. հունվար-ապրիլի նկատմամբ,%
	2005թ. հունվար- ապրիլ	2004թ. հունվար- ապրիլ	2005թ. հունվար- ապրիլ	2004թ. հունվար- ապրիլ	
Կատարվել է որս ընդամենը (ձկնորսության, ձկնաբուծության ուլորտում)	202.4	313.4	317768.2	492038.3	64.6
<i>որից`</i> իրացվել է ընդամենը	202.4	313.4	317768.2	492038.3	64.6

¹ Առանց անհատ ձեռնարկատերերի և տնային տնտեսությունների (ոչ ֆորմալ) գործունեության գնահատմամբ: